## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՀԵ ՔԵԹԼԻԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՎԱՀԷ ՔԷԹԼԻԻ* ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, Ձեր բազում տարիներու բազմաբեղուն և յարատևողական աշխատանքներուն մասին զորս այնքան նուիրումով յառաջ տարած էք թէ՛ Կ. Պոլսոյ, թէ՛ Միացեալ Նահանգներու և թէ՛ վերջին երեք տասնամեակներուն Մոնթրէալի մէջ:

Այն ինչ որ ձեռք բերիք որպէս ոգի, ուսում է ծառայութեան կամք Կ. Պոլսոյ հայութեան դարաւոր աւանդութենէն՝ Դուք գիտցաք առատաբար ի սպաս դնել գործնական եղանակներով, կեանքով և գործով, ի սպաս մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովուրդին:

Մեծ դեր խաղացիք մասնաւորապէս Գանատայի Հայոց Ազգային Առաջնորդարանի կազմութեան և զարգացման այնքան նուրբ և կարևոր գործին մէջ: Բացի եկեղեցիէն, Դուք ծառայութեան լայն բաժին բերիք Հ.Բ.Ը.Մ.-ի և Պոլսահայ Միութեանց մէջէն:

Ի գնահատութիւն բազմամեայ և բազմարդիւն Ձեր սպասաւորութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր արժէքաւոր ծառայութիւնը մեր Եկեղեցիին միշտ նորանոր նուաճումներով և օգտաշատ բարիքներով ի վայելումն մեր սիրեցեալ հայ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 90